



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

616.95

Հ-15

Առաջին ձեր յաւե-  
լուած

«Ա.Ա.ՌԴԱ.ՊԱ.ՀԻԿ. ԹԵՐԹԻ»

1904—5

# ՍԻԲԻՐԱԿԱՆՑ

Կազմեց

Գ. ՂԱԶԱՐԵԱՆՑ



ԹԻՖԼԻԶ 1904 թ.

Տպարան „ՀԵՐՄԱՆԱԿ“ Մադար. փող. № 15.  
(53)

30 JUL 2010

18.06.2013

Առաջին ձեր յաւելուած «Ս.Ռ.ՌՈՂ.ՁԱ.ՊԱ.ՀԱ.Կ.»  
ԹԵՐԹԻ (1904—1905)

610  
194-ԴԿ


616.95 մը.

ՍԻԲԻՐԱԿԱՆ

Դ-15-

856

1003  
102  
103



Գ. Դ. Զ. Ա. Ր. Ե. Ա. Յ

Ք զայց ուսուց  
Ք զայց ք թիւնու  
Ք զայց ք թիւնու  
Ք զայց ք թիւնու  
Ք զայց ք թիւնու  
0.25 1 2 3

ԹԻՖԼԻԶ 1904 թ.

Տպարան „ՀԵՐՄԱԿԱ“ Մադար. փող. № 15.

Ց Ա Խ Ա Գ Ա Գ Ա Ս

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го сент. 1904 г

**Ս Ի Ֆ Ի Ր Ա Խ Ա Տ**

Սիբիրախտը կենդանիների բոլոր վարակիչ հիւանդութիւններից ամենասարածուածն է և տարածուամ է ոչ թէ օդի միջոցով, այլ անմիջական շփուանվ։ Դժուար թէ ամբողջ աշխարհում լինի մի երկիր, որ ծանօթ չկենի սիբիրախտի հետ, մի քանի երկիրներ մինչև այժմ էլ մեծամեծ վնասներ են կրում այդ հիւանդութիւնից։ Ոռւսաստանում ամեն տարի շատ նահանգներում սիբիրախտ է յայտնւում և անսառնների մէջ զգալի կոտորածներ առաջացնում։ Ներքին Գործերի Նախարարի տեղեկագրից երկում է, որ 1891 թ. սիբիրախտը տարածուած է եղել եւրոպական Բուսաստանի 60 նահանգներում, Կովկասի 6 նահանգներում և ասիական Ոռւսաստանի 10 նահանգներում։ Կայսրութեան այդ 76 նահանգներում ընդամենը հիւանդացել են 19,490 ձի, որից 12,410-ը մեռել է, 13,130

մԵծ եղջիւրաւոր անասուն, որից մեռել է 10,389, 17,030 ոչխար, որից 16,050-ը մեռել է և վերջապէս 1,326 խոզ, որից մեռել է 975-ը:

Հին ժամանակներում սիբիրախտը չարիք  
էր համարում միայն Սիբիրիաի համար, որ-  
տեղ մինչև այժմ էլ այդ հիւանդութիւնից  
կոտորում են բազմաթիւ անասուններ. այդ  
պատճառով էլ հիւանդութիւնը սիբիրախտ է  
կոչում:

Սիրիախտով կարող են հիւանդանալ համարեա բոլոր կենդանիները, բայց ամենից աւելի հեշտ հիւանդացող են համարւում խոտակերները, մեծ եղջիւրաւոր անասունները, ոչխարները, ձիերը։ Սիրիախտով բռնուելու աւելի քիչ տրտմադրութիւն են ցոյց տալիս խողերը, մասկերները և թռչունները։ Սիրիախտով հիւանդանալ կարող են և մարդիկ։

**Սիբիրական Պատմականություն**

գարնան վերջերը և աւելի սաստիկ կերպով  
տարածւում է ամառ, մանաւ անդ երբ սկսում  
են անձրեները և ապա շրջերը: Սիբիրականը  
աւելի շատ յայտնում է ճահճային և կի-  
զահողութ տեղերում, որոնք պարունակում են  
իրանց մէջ շատ փտած բուսական մնացորդներ: Առանձնապէս խիստ վնասակար են ճանաչուած  
այն ճահճաները, որոնք երբեմն չորանում են,  
երբեմն էլ սաստիկ անձրեների պատճառով  
խոնաւ անում, տղմառում, որովհետև այդպիսի  
տեղերում են սիրում ապրել և բազմանուլ  
մեծ բանակութեամբ բակուրիաները: Նրանց  
բազմանումը դադարում է միայն այն ժամա-  
նակ, երբ երկրի հակերեսոյթը ծածկում է հո-  
ղի կարծր, չորացած կեղեռվ. բայց հենց որ  
սկսեն անձրեներ գալ և կեղեռ խոնաւանա,  
փափիի, վարակիչ նիւթը կրկին սկսում է  
բազմանալ: Ցրտերն սկսուելուն պէս (աշնանը  
և ձմռանը) բազմանումը և զարգանումը դա-  
դարում է, ահա այդ պատճառով էլ ձմեռը  
շատ քիչ է պատահում, որ անասունները սի-  
բիրակառվ հիւանդանան:

Եթէ վեր առնենք սիբիրականից մեռած  
կենդանու զիակից մի կաթիլ արիւն, մանա-  
ւանդ մահուանից անմիջապէս յետո, այն ժա-  
մանակ մանրացոյցի տակ միշտ կարելի է տես-

նել այդ կաթիլ արեան մէջ անթիւ—անհատար փայտիկներ, որոնք խուզած մաղիկների նման են երեսում մանրոցների տակ: Ահա հէնց այդ փայտիկներն են սիրիրախտի սկզբնական վսրակը: Մի կաթիլ արեան մէջ կարելի է հաշուել մինչև մի միլիոն այդպիսի բակտերիաներ:

Սիրիրախտով հիւանդացած կենդանիների արեան մէջ գիտնականները դեռ շատ փաղուց նկատել էին բակտերիաներ, բայց նրանցից ոչ ոքի մոքովն անդամ չէր անցնուուր, որ այդ աննշան բակտերիաներն են սիրիրախտի պատճառը: Միայն վաթունական թուականներին Դօվիչն անունով մի ֆրանսիայի գիտնական կարծիք յայտնեց, թէ սիրիրախտով հիւանդացած կենդանիների արեան մէջ գտնուող բակտերիաներն այդ հիւանդութեան սկզբնապատճառներն են: Այդ բանն ապացուցնելու համար Դօվիչնը վեր առաւ սիրիրախտով հիւանդ կենդանուց մի կաթիլ արիւն և նրանով պատճառատեց մի ուրիշ բոլորովին առողջ կենդանու: Մի քանի ժամանակ անցնելուց յետ այդ կենդանին, ճշմարիտ, որ հիւանդացաւ սիրիրախտով և մեռաւ, իսկ նրա արեան մէջ գտնուեցան մեծ քանակութեամբ նոյնպիսի բակտերիաներ:

Ներկայումս արդէն ոչ ոք չի կատկածում, որ կենդանիների սիրիրախտը առաջանում է կենդանու մարմնի մէջ առանձին տեսակի բակտերիաներ ներս մանելուց և որ այն մանրիկ ցուպիկները (որ կարելի է տեսնել մանրացոյցի տակ սիրիրախտով հիւանդ կենդանու մի կաթիլ արեան մէջ) այդ հիւանդութեան իսկական պատճառներն են: Նրանք արագագէս վերլուծում են արիւնը:

### Սիրիրախտի բակտերիաների ԿԵՍՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սիրիրախտի բակտերիաները կարող են ապրել եւ բազմանալ ինչպէս կենդանիների մարմնի (նրա արեան մէջ), նոյնպէս եւ նրա մալրմնից դուրս—հողի, ջրի մէջ, ըոյսերի վրա: Նրանք իրանց գոյութեան պայմանների վերաբերմամբ խիստ սակաւապահանջ են և այդ պատճառով ուր էլ որ լինեն, համարեա միշտ կարող են իրանց համար մնունդ գտնել: Սիրիրախտի բացիկների զարգացման համար կարեւոր են միայն հետեւեալ երեք պայմանները. ա) օդի բաւականաչափ հոսանք, բ) չափաւոր խոնաւութիւն և գ) չափաւոր տաքութիւն,—12<sup>0</sup> ոչ պակաս և 45<sup>0</sup> ոչ բարձր:

Աշա հէնց այն հանդամանքի շնորհիւ  
է, որ այս բակտերիաները իրանց գոյութեան  
պայմանների վերաբերմամբ պահանջող չեն.  
սիբիրակառը մի այնպիսի հիւանդութիւն է,  
որ կարող է պատահել ամենայն տեղ։ Որով-  
հետեւ այս վարակիչ նիւթը հօղի մէջ երկար  
ժամանակ ապրելու և մնալու ընդունակու-  
թիւն ունի, այդ պատճառով էլ սիբիրախտ հիւ-  
անդութիւնն առաւելապէս տեղական հիւան-  
դութեան բնաւորութիւն է կրում, այսինքն.  
կապուած է մի որոշ տեղի հետ, որտեղ հօղի  
շերտն արդէն վարակուած է սիբիրախտի բակ-  
տերիաներով։

Ինչպէս արևմտեան Եւրոպայում, նոյնպէս  
և Ռուսաստանում շատ տեղեր կան (նահանգ-  
ներ, գաւառներ, որոնք հարուստ են ճահ-  
ճոտ աեղերով), որտեղ շնորհիւ հօղի մէջ ե-  
ղած մեծ քանակութեամբ սիբիրախտային  
բակտերիաների, ամեն տարի մեծ քանակու-  
թեամբ անասունների կոտորուելը մի սովորա-  
կան երկոյթ է համարւում։ Ֆրանսիաում  
ժողովուրդը այդպիսի տեղերը մինչև իսկ «ա-  
նիծուած լաշտեր» է անուանում, որովհետեւ  
հէնց որ անասուններին այդ կողմերն են քը-  
շում արածելու, իսկոյն սկսում է նրանց կո-  
տորածը։

Սիբիրախտով հիւանդացած կենդանինե-  
րը, դեռ իրանց կենդանութեան ժամանակ, ար-  
տադրում են սիբիրախտի բակտերիաներով  
հարուստ մէզ և կղկղանք։ Դիակն ընկած տե-  
ղը վարակում է իսկոյն, մանաւանդ եթէ  
այդպիսի դիակից կաշին հանում են կամ մար-  
մինը հոտած է լինում, որովհետեւ ամբողջ տա-  
րածութեան վրա հօղի շերտը ծծում է իր  
մէջ ահագին քանակութեամբ սիբիրախտի  
բակտերիաներ։ Այդ բակտերիաներն ընկնելով  
հօղի երեսը, սկսում են արագութեամբ բազ-  
մանալ, մանաւանդ եթէ եղանակը տաք է և  
շնորհիւ հօղի մէջ ապրելու իրանց ունեցած  
ընդունակութեան, երկար ժամանակ պահում  
են այնտեղ (հօղի մէջ), և հողը մի քանի տա-  
րի շարունակ սիբիրախտի օջախն է զառնում։  
Բայց դրանից վարակիչ նիւթը երբեմն չորա-  
ցած խոտի, կաշուի հետ, երբեմն էլ ջրի հետ  
(զետերի հեղեղութձ ժամանակ) հեշտութեամբ  
փոխադրում է վարակուած տեղից հարեւան  
տեղերը և այդպիսով այն տեղերում ևս սուեղ-  
ծում է սիբիրախտի նոր օջախներ։ Միջատ-  
ները ևս (մոի ճանճերը, բոռերը—գոռեխները)  
կարող են վարակիչ նիւթը տարածել այս ու  
այն կողմ՝ երբեմն բաւական հեռու։ Ճանճերը  
նախապէս մնուելով սիբիրախտով հիւանդ կեն-

գանու արիւնով, կարող են կծել առողջ կեն-  
դանիներին ու հեշտութեամբ կարող են վա-  
րակել վերջիններին սիրիրախտով:

**Թէ Ի՞նչ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ՍԻՐԻՐԱԽՏԻ**  
**ՎԱՐԱԿԻՉ ԹՈՅՑՆԸ ՄՏՏՈՒԹՄ Է ԿԵՆԴԱՆՈՒ**  
**ՕՐԴԱՆԻՉՄԻ ՄԷԶ**

Սիրիրախտի վարակիչ թոյնը կարող է  
ժանել կենդանիների մարմի մէջ երեք ճանա-  
պարհով. կամ աղիքային խողովակի միջով—  
կերի և ջրի հետ, կամ թոքերի միջով—ներ-  
շընչած օդի հետ միասին, կամ քիչ մնասուած  
կաշուի (վէրքերի, քերծուածքների) միջով:  
Կենդանիների մէջ աղիքային խողովակի  
և թոքերի միջով տեղի ունեցող վարակումը  
առելի յաճախ է պատահում և սիրիրախտի  
խիստ սասահիկ ու սրընթաց հիւանդութիւն  
առաջնում, մանաւանդ շոք ամառները: Ե-  
թէ կենդանին արածում է այնպիսի արոտա-  
տեղերում, որտեղ սիրիրախտից մեռած կենդա-  
նիներ են թաղուած կամ ուտում է այդպիսի  
տեղերից քաղած խոտը, եթէ նա խորում է այն  
գետի, լճի, ճահիճի ջուրը, ուր զցուած է եղել  
սիրիրախտից մեռած կենդանու դիմակը կամ որ-  
տեղ այդպիսի կենդանիների կաշին է թըր-

ջուած, բուրդն ու մազն է լուայուած,—  
այդ բուրդ դէպքերում կենդանին հեշտու-  
թեամբ կարող է վարակուել սիրիրախտով:  
Աերի միջով վարակուելը հնարաւոր է ոչ միայն  
ամառային ամիսներում, երբ սովորաբար ա-  
ւելի յաճախ է պատահում այս հիւանդու-  
թիւնը, այլ և ձմեռը, երբ կենդանիները  
փակուած են լինում գոմերում՝ ու ախոռնե-  
րում: Աչա հէնց այս պատճառով էլ կենդա-  
նիների սիրիրախտով վարակուելու վերաբեր-  
մամբ, մանաւանդ ամառ ժամանակը, պէտք է  
խիստ վտանգաւոր համարել այն բուրդ տեղե-  
րը, որտեղ կան կաշուի, եղջիւրի գործարան-  
ներ, նաև բուրդ լուալու, սատկած անա-  
սուններ քերթելու տեղերը, նրանց գերեզ-  
մանները: Այդպիսի տեղերի մօտ արածելով  
կենդանին հեշտութեամբ կարող է պատահել  
սիրիրախտի վարակիչ թոյնին և, ընդունելով  
այդ թոյնը այս կամ այն ճանապարհով (կերի,  
ջրի, ներջնչած օդի հետ) վարակուել կարող է սի-  
րիրախտով: Կաշուի միջոյով սիրիրախտով վարա-  
կուելու դէպքեր կննդանիների մէջ աւելի սա-  
կաւ են պատահում, քան թէ աղիքային խողովա-  
կի և թոքերի միջով և առաջին դէպքում այն-  
պիսի կատաղի հիւանդութիւններ չեն առա-  
ջանում, ինչպէս վերջին երկու դէպքերում: Այս

կարգին են պատկանում դլասաւորապէս միջատ-  
ների կծելուց առաջայած վարակման դէպքերը:

ՍԻՐԻՄԱԽՈՎ, ՀԻՒԱՆԴԱՆԱԼՈՒ ԵՐԵՎ ՏԵ-  
ՍԱԿԸ ԿԱԹՈՒԱԾԱԿԱՆ, ՍՈՒՐ ԵՒ ԴԱՆԴԱՂ-

### ՀԵԹԱՅՑ

Ի նկատի ունենալով այն հանգամանքը,  
որ վարակիչ նիւթը կենդանու մարմնի մէջ  
ինչ քանակութեամբ է մոնում և թէ վարակ-  
ման րոպէին կազմուածքը որքան տրամադիր  
է հիւանդութեան (հիւանդալից կամ վաս-  
առողջ վիճակը, մրսելը, վատ սնունդը, շատ  
աշխատելուց նուազելը—այդ բոլորն աւելի  
տրամադրում է կենդանուն վարակուելու), սի-  
բիրախտ հիւանդութիւնը կարելի է երեք  
տեսակի բաժանել.

1: Կաթուածական սիբիրախտի ժամանակ  
կենդանիների հիւանդութիւնը շատ երկարա-  
տե չի լինում, երբեմն մի քանի րոպէ միայն:  
Սկզբում արտաքուստ բոլորնին առողջ երեա-  
ցող կենդանու ուզեղը խանդարում է և կեն-  
դանին յանկարծ սկսում է ցնցուել, այս ու  
այն կողմ օրորուել և վայր ընկնել. բերանից,  
քթածակերից, ուղիղ աղիքից սկսում է դուրս  
հոսել արիւնոտ, փրփրոս մաղաս, պարանոցի,

ոտների մէջ սաստիկ ջղաձգութիւն է տեղի  
ունենում և կենդանին մեռնում է: Այս բո-  
լորը տեսում է 5—10 բոպէ:

Այս տեսակ սիբիրախտի դէպքում յա-  
ճախ կատարեալ առողջ երեացող կենդանինե-  
րին բոլորովին անսպասելի կերպով գտնում են  
գոմում արդէն մեռած և միայն ոտերի տակի  
ծեծուած աղբը ցոյց է տալիս, որ նրանք մա-  
հուանից առաջ ցնցումներ են ունեցել: Յա-  
ճախ կենդանիները յանկարծ, հէնց ուղղակի  
լծած տեղը, աշխատելիս մեռնում են անսպա-  
սելի կերպով:

Հիւանդութեան այս տեսակից շատ յա-  
ճախ վնասում են ոչխարները և մեծ եղիւ-  
րաւոր անասունները: Զիերն այս տեսակ սի-  
բիրախտով հիւանդանում են սովորաբար վա-  
րակուած տեղում հէնց սիբիրախտի երեալու  
սկզբներին. ձիերը աւելի յաճախ հիւանդա-  
նում են սուր եւ դանդաղութաց տեսա-  
կով:

2. Սուր տեսակ սիբիրախտի ժամանակ կեն-  
դանու հիւանդութիւնը համեմատաբար աւե-  
լի երկար է տեսում. 4—12 ժամ, երբեմն և  
մի ամբողջ օր: Հիւանդ կենդանին շատ տաքու-  
թիւն է ունենում, որը համարում է մինչև 40  
42° Ա. և արիւնը դէմի գլուխն ու թոքերը

լցուելու նշաններ են երեսում. — աչքերը կար-  
մրում են, դլիսի պտղյու առաջ գալիս, կենդա-  
նին կանգնում է այնպէս, որ կարծես զրկուած  
լինի լսողութիւնից, չնչառութիւնն արագա-  
նում է, զարկը խփում է արագ-արագ, քթի  
մաղասամաշկը պայծառ կարմիր գոյն է ստա-  
նում, կենդանին անհասատ քայլեր և շար-  
ժումներ է անում, կզկզանքը և մէզը արեան  
գոյն են ունենում, կենդանին ոտները գետնին  
է խփում, աքացի է տալիս, բարձրանում է  
յետին զյոդ ոտների վրա, ատամները կրճտա-  
ցնում է, սկսում է ջղաձգութիւնը, նա վայր է  
ընկնում, ուշակորոյս է լինում, բերանից, քը-  
թից և յետոյքի անցքից արիւն է հոսում:  
Երբեմն երեան են գալիս նաև կատաղութեան  
սկզբնական նշաններ. ոտներով, գլխով խփում  
է գետնին և մեռնում է: Երբեմն առաջին  
ջղաձգութիւնից յետոյ կենդանին կարծես թէ  
ժամանակաւորապէս լաւանում է, բայց քիչ  
միջոց անցնելուց յետո կրկին սկսում է ջղա-  
ձգութիւնը, որից և կենդանին մեռնում է:  
Ջղաձգութիւնների միջոցում կենդանին ձըն-  
շուած վիճակի մէջ է լինում, նրա դէմքը յու-  
սահատութիւն է արտայայտում, նա գլուխը  
կախ դցած է պահում և շարժուելիս այս ու  
այն կողմն է օրորւում:

Յ. Սիրիրախտի երրորդ դանդաղընթաց տե-  
սակը 2—5 օր, երբեմն և աւելի է տեսում և  
յատուկ է եղջիւրաւոր անասուններին և ձիե-  
րին: Այս գէպքում ևս հիւանդութեան նշան-  
ները նոյնն են, ինչ որ սուր հիւանդութեան  
ժամանակ, միայն պակաս արտայայտիչ են և  
աւելի երկարատեւ. սակայն այս ժամանակ ևս  
հիւանդի տաքութիւնը բաւականաշափ բարձր  
է լինում, մանաւանդ հիւանդութեան սկզբում:  
Բայցի սրանից նկատելի է լինում նաև որո-  
ճալու անկանոնութիւն, մարտզութեան խան-  
գարում, ամրութիւն (կապ), խիթքեր (ցաւեր,  
սանծու), շնչում է նաև շատ ծանր, և հետ-  
ևով, սատոիկ ծարաւութիւն է զգում, մար-  
մի վրաի բուրդը խիստ զգգողած է լինում,  
մլանները դոզիրում են և երբեմն պատահում  
է նաև անընդհատ լուծ: Կովերը նոյն իսկ  
գաղարում են կաթ տալ, կղկղանքն սկզբում  
լինում է չոր, ազա մաղասախտոն և երբեմն  
էլ թարախտառն, տաքութիւնը հասնում է  
մինչև 42° Ա, երբեմն իջնում է բնականին  
հաւասար: Եթէ աղիքները վնասուած չեն,  
աիրիրախտի ժամանակ կենդանին երբեմն մին-  
չև մահը կեր է ուտում:  
Այս տեսակի սիրիրախտի միջոցի երեա-

լուց կէս կամ մէկ օր յետոյ սովորաբար ձիերի  
(սակաւ անգամ եղջիւրաւոր անասունների)  
մարմնի զանազան մասերում (գլխի, որովայ-  
նի, աշորձապարկի, աճուկների, ստինքի,  
կրծքի, պարանոցի, ուսերի, կոկորդի վրա)  
գուրս են գալիս առանձին տեսակ ուսուցք-  
ներ (քարցուներ), որոնք սկզբում վորքը  
են լինում (արքայակաղինի մեծութեամբ), կար-  
ծես օձի կծած լինեն, բայց շուտով արագու-  
թեամբ սկսում են մեծանալ և մարդու գլխի  
չափ դառնալ: Սկզբում այդ ուսուցքներն ար-  
տաքուստ կարծր, տաք, շօշափելիս ցաւակիր  
և վորքը են լինում, բայց յետո մեծանում  
են, մէջները ջրային հիւթ՝ է դայանում  
և նրանք սառնեն դառնում ու էլ չեն ցաւում;  
որոնք կոչում են ջրակալքներ (օտեկ): Այ-  
սիսի ուսուցքներ կենդանիների վրայ կարող  
են պատահել նաև ուրիշ պատճառներից և  
հիւանդութիւններից, բայց հասարակ ուսուցք-  
ները երբէք այսպիսի արագութեամբ և այս  
աստիճան չեն մեծանում: Եթէ կենդանու  
վրայ մի ուսուցք յայտնուի և այդ ուսուցքը  
շատ կարճ ժամանակամիջոցում սկսի աճել և  
եթէ իմացուի, որ մօտակայում անասունների  
մէջ ջարդ կայ, համարձակ կարելի է ենթաղրել.  
որ հասարակ ուսուցք չէ, այլ սիրիական է:

Սոյննան ուսուցքներ կարող են գրա-  
նալ նաև կենդանու մարմնի ներսը կամ հասա-  
կ բարակ աղիքների մազասահաշկի վրա, կամ  
շնչառութեան գործարանների շրջանում: Կեն-  
դանի ժամանակն այդ ուսուցքներն, ի հար-  
կէ, չեն նկատում: Նրանց կարելի է գտնել  
միայն սիրիականով վարակուած կենդանու  
դիակահատութեան ժամանակ:

Այն տեղերում, ուր յաճախ է պատա-  
հում սիրիական հիւանդութիւնը, հովիւնե-  
րը հիւանդութեան հէնց առաջին նշաններից  
ճանաչում են այդ:

### ՈՉԽԱԲԻՆԵՐԻ ՍԻՐԻԱԿԱԽԾ

Ոչխարների մէջ տւելի յաճախ այս հիւ-  
անդութեան կաթուածական տեսակն է պա-  
տահում: Այս հիւանդութեան ժամանակ ա-  
ռաջուց բոլորովին առողջ ճանաչուած ոչխար-  
ներն անսպասելի կերպով յանկարծ վայր են  
ընկնում իբրև կաթածահար և ջղաճութեան  
մէջ մի քանի բոպէից յետո անշնչանում են:  
Նրանց քթածակերից, յետոյքի անցքից, սե-  
ռական գործարաններից սկսում է արիւնալից  
արտահանութիւնն Այդ բանը պատահում է  
կամ արօտներում կամ գոյնում, ուստի և սիրի-

րախտի ժամանակ յաճախ ոշխարներին առաւտոները գոմում սատկած են դտնում:

Երբ ոչխարների սիրիրախտը դանդաղընթաց է լինում, նրանց հիւանդութեան նշանները նոյնն են (ջերմ, խլացում, ուռուցքներ), ինչ որ ձիերինն ու եղջիւրաւոր անասուններինն է: Ուստաստանում՝ սիրիրախտով ամենատարի մեռնում են միջին թւով մինչև 100,000 գլուխ ոչխար:

### ԽՈՉԵՐԻ ՍԻՐԻՐԱԽՏ

Խողերը, նմանապէս և մասկերները սիրիրախտով աւելի քիչ են հիւանդանում, քան խոտաներները: Մրանց շրջանում այս հիւանդութիւնը սովորաբար միայն այն ժամանակն է պատահում, երբ այդ միենոյնն արդէն դոյութիւն ունի խոտակեր անասունների մէջ: Խողերի և մասկեր կենդանիների սիրաբախտով վարակուելու ազդիւր ծառայում է սովորաբար սիրիրախտով հիւանդ կամ մեռած կենդանիների միաը, որ նրանք ուտում են: Խողերի սիրիրախտը արտայայտում է սովորաբար նրանվ, որ կոկորդի, լեզւի վրա ուռուցքներ են դուրս դալիս և բացի գրանից կենդանին ունենում է սաստիկ ջերմ ( $41-42^{\circ}$ ), չնչառու-

թիւնն ազատ չէ, կերը դժուարութեամբ է կուլ աալիս, բերանի խոռոչը սաստիկ կարմրած և կենդանին խիստ անհանգիստ է: Ուռուցքը շնչափողի երկարութեամբ արագ աճում է, կենդանին յաճախ վայր է ընկնում, սկսում է արտադրել արիւնախտոն կղկղանք և մեծ մասամբ խեղտամահ լինում: Շատ քիչ է պատահում, որ սիրաբախտով հիւանդացած խողը առողջանա: Հիւանդութիւնն էլ երկար չի տևում—12—24 ժամ, որից յետո տեղի է ունենում մահը:

### ՄԱՐԴԻ ՍԻՐԻՐԱԽՏ

Երբեմն անզգուշութիւնից ժարդն էլ է հիւանդանում է սիրիրախտով: Մարդիկ ամենից աւելի շատ վարակում են սիրիրախտի թոյնով կաշւի վրա եղած վերքի, քերծւացքների միջով: Հիւանդանում են մեծ մասամբ անասուններ քերթողները, կաշեգործները (դաբաղները), հովիւները, պայտարները (նալբանդ), բուրդ ու մազ մաքրողները ու սրանց մշակութեամբ պարապողները:

Մի տեղ մասզործի մէկը մորթել է սիրաբախտով հիւանդ եղանը և նրա փորոտիքով կերակրել է խողերին, որոնք բոլորն էլ շու-

տովլ մեռել են սիրաբախտից։ Մասգործը քերթել է մեռած խոզերի մազերը, նրանց ճարպը ծախել է, իսկ դիակները թաղել բանջարանոցում։ Երեք օրից յետո ինքը մեռել է սիրիբախտից, իսկ մի շաբաթից յետո նրա կինը, որովհետեւ օգնել էր ամուսնուն յիշած գործում։

Մի այլ տեղ սիրիբախտով հիւանդացել է գիւղացու կովը։ Տէրը շտապել է մորթել այդ կովը, մաս մի մասը ինքն և իր ընտանիքն են կերել, իսկ մնայած մասը ծախել է հարևաններին։ Մրա հետեւանքն այն է եղել, որ հինգ մարդ հիւանդացել է և երկուսը մեռել։

Մի այլ տեղում սիրաբախտից վարակուել եւ մեռել է 6 մարդ, որովհետեւ սատկած կենդանիների կաշի են քերթել։

Սիրաբախտով սաստիկ ծանր կերպով հիւանդացել են նաև երկու հովիւ։ Հետազոտութիւնը ցոյց է տուել, որ այդ հովիւները սիրիբախտից մեռած ոչխարների մորթի են քերթել և ճարպն էլ հանել։

Սիրիբախտի ժամանակ մարդու կաշուի վրա հէնց այն տեղում, որտեղ թափանցել է սիրիբախտի վարակիւնիւթը, երեւում է մի փոքրիկ կարմիր բիծ և նրա մէջ մի աւ կէտ։ Այդ բիծը սաստիկ քոր է գալիս, յետո զուրս է գա-

միս բշտիկ, սրա ծայրին գոյանում է մի փալիքշտիկ, որը սկզբում լցուած է լինում բայց, իսկ յետո մուժ կարմրագոյն հեղուկով։ Բշտիկը սաստիկ կակտում է և յաճախ քորելիս փափաշիկը պոկում է, երբեմն էլ մի օրից յետո փափաշիկն ինքն իրեն տրաքում է և նրա տեղը մի մթնաղոյն խոց է գոյանում, որը շատ ցաւում է։ Յաճախ հիւանդութիւնն աւելի առաջ է գնում, երբ իր ժամանակին բժշկական օգնութիւնն հասցրած չեն լինում. լինում է ջերմի թուլութիւն, յովերում սաստիկ ցաւեր, գլխի պտոյտ, երբ այդ հիւանդութիւնը մարդի է պատահում, սաստիկ առքութիւն է առաջ բերում։ Հիւանդը զառանցում, մինչեւ իսկ ուշագնա է լինումու երկար տանջուելուց յետո մեռնումէ։ Հիւանդութիւնը տեսումէ 5—8 օր։

### ՆԱԽԱՐԱԳՈՒԽԵԱՅՈՒՅԻՉԻՉ ՄԻԶՈՅՆԵՐ

Դիակի թաղման կերպը։ Նախընթաց գլուխներից մէկում մենք տեսանք, որ վարակման գլխաւոր ազբիւրը սիրիբախտով վարակուած կենդանու արտաթօրութիւններն են, նրա խոցերի թարախը. սատկելուց յետո սիրիբախտաւորի զիակն էլ շատ վասանդաւոր է, ուստի և անհրաժեշտ է հնար եղածին չափ

շուտով հոքս տանել զիակը վերցնելու մասին։  
Դիակը պէտք է թաղել կաշին չքերթած ճա-  
նապարհներից, արօտատեղերից և անասուն-  
ները ջրելու տեղերից հեռու, մի բարձր և  
չոր տեղ երեք արշին խորութիւնից ոչ պակաս  
փոսի մէջ։ Հակառակ գէպքում հողի միջի երկ-  
րամայրելը դուրս կրերեն երկրի միջից այդ  
հիւանդութեան բակտերիաները, որոնք քա-  
մու և փոշու միջոյով կտարածուեն բոյսերի  
վրա և այնտեղից հեշտութեամբ կանցնեն կեն-  
դանիների ստոժոքու և կվարակեն։ Դիակը  
փոսն իջեցնելուց յետո լաւ կլինի վրան 1½  
վերշոկ կիր կամ նախու լցնել ու այրել, որպէս  
զի նրա վրա եղած կաշին փշանա։ Փոսի շուրջը  
եղած անհաքրութիւններն ևս պէտք է լցնել  
փոսի մէջ և ապա հող կամ կիր ածել վրան։  
Գերեզմանի վրա մի արշին բարձրութեամբ հո-  
ղաբլուր պէտք է բարձրացնել, որպէս զի գայ-  
լերն ու շները չկարողանան գերեզմանը բաց-  
անել։ Եթէ հողաբլուրի վրա քարեր էլ դրու-  
են, աւելի անվտանգ կլինի։ Այս բոլորից յետո  
հարկաւոր է գերեզմանները լաւ ցանկապատել,  
որպէս զի անասունները և գաղանները չկարո-  
ղանան մօտենալ։ Դիակն այդպիսի խորութեան  
մէջ թաղելով կարելի է յուսալ, որ նրա արեան  
մէջ եղած սիրիակախակի վարակիչ նիւթը կքայ-

քայուի, որովհեաւ սիրիակախակի բակտերիանե-  
րը օդի պակասութեան պատճառով զիակի մէջ  
այդպիսի փոսում անկարող են ապրել և ան-  
հրաժեշտորէն պէտք է ոչնչանան։ Թէ՛ ցան-  
կապատերը և թէ գերեզմանները պէտք է ա-  
մեն տարի ուղղել։

Ախտահանութիւն։ Դիակն այս կերպ թա-  
ղելուց յետո հարկաւոր է մաքրել, ախտահա-  
հանել այն բնակարանները, որտեղ եղել է հի-  
ւանդ և մեռած կենդանին։ Բոլոր այն տեղե-  
րից, որտեղ հիւանդ կենդանին կանդնել կամ  
ման է եկել, մանաւանդ, որտեղ ընկած է եղել  
զիակը—ախտոռում կամ արօտներում—հիւանդ  
կենդանու թափթփած արտաթօրութիւնները  
այրել կամ թաղել հողի մէջ խորը, նախօրօք  
իրան լցնելով կրսջուր (մի մաս կիր 4 մաս  
ջրի մէջ բանալով)։ Նոյն կերպ պէտք է վար-  
ուել նաև կերի մնացորդի ու տակի փռւածքի  
հետ (խոր, դարձման, ծղօտ)։ աւելի լաւ է,  
շաղ տալ այդ տեղերը չհանգըրած (անշէջ) կիր  
կամ կրակաթ։ Ով կարող է, թող շաղ տա  
կրթօլաթթւուտի կամ սուլեմի լուծւածքով  
(2 մաս սուլեմա 1000 ջրի հետ) անասնա-  
բոյժի խորհուրդով։ Ախտահան պատերն ու  
առաստաղը նոյնպէս պէտք է տիսահանել կամ  
կրածուր ցանելով կամ իշած լուծւածքով։

Եթէ անստունների բնակարանների յառակը  
տախտակամած է, հարկաւոր է վերցնել և տախ-  
տակները և նոյն իսկ տակի հողից մի Յ վեր-  
շոկ քանդել և տանել փոսում խորել:

Եթէ այս բոլոր միջոցները կանոնաւորա-  
պէս չդորձադրուեն և մի որեւ է տեղում, բա-  
կում կամ ախոռում մնացած լինի վարակիչ  
թոյնը, շատ շուտով նորից առաջ կդա այդ հի-  
ւանդութիւնը և այսպէս մի քանի տարի շա-  
րունակ նոյն տեղերի ձիերը և այլ անստուն-  
ները ենթակա կլինեն այդ տերերչ հիւանդու-  
թեանը: Սարքերը, սանձերը և այն բոլոր ա-  
ռարկաները, որոնք այսպէս թէ այնպէս շփումն  
են ունեցել վարակուած անստունների հետ,  
հարկաւոր է երկու անդամ լուանալ տաք մոխ-  
րաջով և մրաները առատ կուպր քսել: Աւելի  
շատ կասկածելիները հարկաւոր է այրել, կով-  
կիթները, ջրաժանները, տաշտերը և ո-  
րիշ առարկաներ, որոնք նոյնպէս շփումն են ու-  
նեցել հիւանդների հետ, եթէ փայտէ են,  
աւելի լաւ է այրել, իսկ եթէ երկաթէ են,  
անհրաժեշտ է կրակի մէջ հրաշէկ անել: Ան-  
հրաժեշտ է նաև լաւ լուանալ, ախտահանել  
կամ նոյն իսկ այրել այն սացլը, որի վրա դիակը  
փոխադրել են գերեզմանատուն:

Սիրիակախտի զարգացման վրա պակաս աղ-

դեյութիւն չունի նաև սիրիակախտից մեռած  
կենդանիներից նոր քերթած կաշին, նրանց  
ուկրերը, բուրդը, մազերը և այլն: Ուրեմն  
պէտք է զբաց լինել կաշու գործարաններից,  
բուրդ լուանալու, անստուն քերթելու տե-  
ղերից:

Անասունների հանգիստը. Եթէ սիրի-  
ակատն առաջին անգամ յայտնուել է ձիերի  
մէջ, առողջ մնացած ձիերին չպէտք է շատ  
խստեցնել, ծանրաբեռնել գործով, մինչեւ իսկ  
աւելի լու կլինի բոլորովին դադարեցնել նրանց  
աշխատանքը գոնէ մի շաբաթի չափ և այդ  
ժամանակամիջոցում լաւ կերակրել: Նկատուած  
է, որ մաշող աշխատանքը և վատ սնունդը ա-  
ւելի արագաղիր են դարձնում կենդանիներին  
հեշա ըմբոնելու սիրիակախտի վարակը:

Արօտատեղերի փոխելը. Եթէ հիւան-  
դութեան դէպքեր են պատահել եղջիւրաւոր ա-  
նասունների կամ օխարների մէջ, պէտք է աշ-  
խատել, գոնէ առժամանակ, տեղափոխել նրանց  
ուրիշ արօտատեղ: Այն դէպքում, երբ գիւ-  
ղում այս հիւանդութիւնից մի քանի ա-  
նասուն է կոտորուել, հարկաւոր է ամբողջ հօ-  
տը 6—7 օր շարունակ բակերում կամ գոմե-  
մերում պահել, իսկ յետ մի նոր արօտատեղ տա-  
նել արածեցնելու: Այս միջոցն այն նշանակու-

թիւնն ունի, որ գոմերում պահելով կենդանիներին, կարելի է միշտ աչքի տակ ունենալ նրանց և եթէ նրանցից մէկը հիւանդանա, խոկյոն պէտք է բաժանել միւսներից: Բացի այդ, գոմերում նրանք աւելի պաշտպանուած կլինեն ճանձերի, բռուերի և այլ միջատների խածելուց:

Ճահիճները ցամաքեցնելը. Անհրաժեշտ է նաև արօտներում եղած ճահիճները ցամաքեցնել, որովհետեւ սովորաբար այդպիսի տեղերում աւելի լաւ է զարդանում այս հիւանդութիւնը: Եթէ զիւղի արօտները ցած հարթիւթիւների վրա են և ճահճային, հարկաւոր է անասուններին տեղափոխել մի աւելի բարձր և չոր տեղ: Ծատ անդամ այս միջոցը միանդամից դադարեցնում է անասունների կոռորածը: Եթէ չոր արօտներ չկան, աւելի լաւ է մինչեւ հիւանդութեան դադարելը անասուններին բակերում պահել և չոր կերով կերակրել: Եթէ մի գոմի մէջ անասուններից մէկը հիւանդացել է, սրանց երբէք չպէտք է դաշտ թողնել, այլ անհաժեշտ է 4 օր մի ուրիշ տեղ պահել և տեսնել թէ արգե՛օք նրանց մէջ հիւանդութեան նշաններ չեն նկատում:

Հիւանդ անասունների համար առանձին տեղ պատրաստելը. Եթէ հօտի մէջ հիւանդ անասուններ շատ երեան, այդ հօտը պէտք է

զիւղից դուրս մի տեղ պահել, որ հեռու լինեն ուրիշ հօտերից, իսկ նրանց խնամելու համար մի առանձին մարդ պէտք է վարձել, որը ամբողջ բժշկութեան ընթացքում կը գործ չպէտք է ունենա առողջ կենդանիների հետ: Սատկածներին պէտք է նոյն տեղում խոր թաղել, ինչպէս վերև ասել ենք, Այդպիսով ազատուած կլինէք դիակները բակից գերեզման տանելուց, որ վտանգաւոր է, որովհետեւ թէ դիակը տանող ձին և թէ սայլի վրա դնող մարդիկ էլի երբեմն կարողեն վարակուել:

Եթէ անասուատէրն ինքը պէտք է խնայք տանի իր հիւանդ անասունների վրա, պէտք է նախ ձեռներին իւղ քսի և ապա գործ սկսի: գործը վերջանալուց յետոյ հարկաւոր է ձեռները և երեսը սասպնով լուանալ: Ձեռների վրա կարուածքներ կամ վէրքեր ունեցողները չպէտքէ ինայք սանեն սիրիրախառվ հիւանդ անասուններին, որովհետեւ հեշտութամբ կարող են իրանք էլ վարակուել:

Հիւանդ կենդանիներին Բժշկելու  
ՄԱՍԻՆ.

Կենդանուն սիրիրախանից բժշկելու համար մի հաստատ միջոց չկա: Սիրիրախանի մեր

Նկարագրած երեք տեսակներից բժշկել կարելի է միայն երրորդը, այսինքն՝ գանդաղլնթաց տեսակը, որը յաճախ պատահում է մեծ եղջեւաւոր անասուններին և ձիերին։ Միայն չպէտք է ուշացնել և իր ժամանակին միջոցներ ձեռք առնել։ Հենց որ սիրիականը յայուղնուեցաւ, հիւանդներին պէտք է առանձնացնել առողջներից։ Առողջ կենդանիներին հարկաւոր է օրական 2—3 անգամ լողացնել սառն ջրով, խմեցնել մաքուր ջուր, որի մէջ առաջուց լաւ կլինի մի քիչ քացախ կամ բորակ (սելիտրա) աւելացնել (մի փեղրո ջրի մէջ 7 մախալ), խսկ հիւանդ կենդանիներին պէտք է տեղաւորել մի հով տեղ, կերակրել հիւթալի կերով, խմեցնել մաքուր ջուր (ջրին կարելի է խառնել աղաթթու) և բանեցնել։ Եթէ հիւանդութիւնը սրնթաց բնաւորութիւն ունի, պէտք է արիւն առնել (մեծ եղջեւաւոր անասուններից 8—12 դրվ., մանրերից —<sup>1/4</sup>—1 դրվ.)։

Սիրիականի ժամանակ շատ կարեոր է խելացի եղանակով խնամք տանելը։ Խորհուրդ ենք տալիս հիւանդ կենդանուն, մանաւանդ եթէ սաստիկ ջերմում է, օրական 2—3 անգամ լաւ լողացնել սառն ջրով, կամ սառն ջրի մէջ թթած տոպրակներով մարմինը փաթաթել և կամ նստեցնել ուղղակի սառն ջրի մէջ, յետո

լաւ չորացնել մարմինը, սրբել, տրորել չոր ծղոտով ու տաք ջու լով լաւ փաթաթել։ Եթէ հիւանդ կենդանու մարմնի վրա ուռուցքներ են դուրս եկել, չպէտք է լողացնել։ Մարմինը կարելի է շիկ նաև բեկնի իւղով (ԸԿԱ-ԱՊՃԱԲ) կամ քացախով։

Սիրիականը բժշկելիս դեղերի վրա չպէտք է մեծ յոյսեր դնել։ Հենց առաջին անգամ հիւանդութիւնը երևալուն պէտք է անմիջապէս զիմել մի հմտութեան և փորձուած անասնաբոյժի։ Աւելի անհրաժեշտ է այս բանը, երբ հարկաւոր է լինում ուռուցքներն այրել, ճեղքել, կտրատել և անդամահատութիւն անել։

**ՍիբիրԱխՏի ՆԱԽԱԶԴՈՒԽԱՅՈՒՅԻՉԻՉ ՊԱՏ-ԻԱՍՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵԼ ԵՒ ԶԵՐՈԲ Ա-ՌԱՋ ՈՍՑԻԿԱՆԱԿԱՆ ՄԻԶՈՅՆԵՐԻ ՕԳՈՒՅ-ՆԵՐԸ.**

Աերեւ առաջ բերած բոլոր միջոցները դորձադրւում են միայն այն դէպքում, երբ սիրիականը պարբերաբար, այսինքն ամեն տարի չի պատահում, այլ միայն պատահաբար է եղել։ Խսկ եթէ աեղումն անասունների մէջ սիրիականը հիւանդութիւնը յաճախ կամ մինչ

իսկ ամեն տարի է պատահում, մի խօսքով. եթէ մի տեղ սիրիրախտը բուն է դրել, այն ժամանակ բոլոր վերև յիշած միջոցները անկարող են հիւանդութիւնը դադարեցնել։ Այսպիսի գէպքում կենդանիներին ցաւից փրկելու համար լաւ նախազգուշացնող միջոցնէ նախազգուշացուցիչ պատաստումը։

Վաղուց արդէն յայտնի է, որ սիրիրախտով մէկ անդամ հիւանդացած ու առողջացած կենդանին մի առ ժամանակ այլ ևս նորից չի հիւանդանում, ուրիշ խօսքերով. սիրիրախտի թոյնը այլ ևս չի ներգործում նրա վրա։

Այս նախապատուաստումը աշազին օգուտներ է տուել արդէն աշխարհին. նրա միջոցով միլիոնաւոր կենդանիներ փրկում են այս սարսափելի ցաւից։ Պատուաստումը կատարուում է այժմ ամեն տեղ ամբողջ հողագնդի վրա և անհրաժեշտ է, որ այսուհետեւ այդ փրկարար միջոցը գործադրուի մեր մէջ ևս և դրանով մեր խեղճ գիւղացու տաւարը փրկուի կոտորումից։

Պատւաստի տռաջին փորձերը կատարել է Ֆրանսիացի գետնական ծուսենը և հետեանքը յաջող է դուրս եկել, այսինքն, պատուաստած կենդանիները նորից սիրիրախտով չեն

հիւանդացել։ Բայց այդ միջոցը մշակեց ու լայն ծաւալով գործադրեց երկելի զիանական Պատւաստօր, իսկ նրանից յետո նաև ոռւս գետնական Յինկովսկին։

Պատւաստումը ներկայումն Ոռւսաստանի շատ նաշանգներում, մանաւանդ հարաւային մասերում գործադրում է շատ ընդարձակ չափով։ Պատւաստում են ոխարներին, եղջիւրաւոր անասուններին և ձիերին։ Պատւաստ կարող են անել այն մարդիկ, որոնք գործնականապէս լաւ սովորել են այդ գործը։ Ահա այս է պատճառը, որ այսպիսիները սովորաբար նշանակուում են կամ բժշկական զեպարտամենտի, կամ անասնաբուժական ինստիտուտի կամ այլ հաստատութիւնների կողմից։

Պատւաստելու համար գործ է ածումը մի տեսակ հիւթ, որ վերցնում են հիւանդ կենդանիներից ու առանձին կերպով պատրաստում մշակում։ Մենք այսուեղ աւելորդ ենք համարում մանրամասն նկարագրելու, թէ ինչպէս է պատրաստում այդ հիւթը և ինչպէս է կատարում պատւաստումը. կամնք միայն, որ մասնագէտ-անասնաբոյժերը այդ հիւթը առանձին գործիքի մէջն լցնում ու սրակում կենդանու կաշու տակ, ինչպէս այդ արւում է մի քանի երեխայական վարակիչ ուրիշ հիւան-

դուք թիւների ժամանակ (օրինակ. ղիզիթերիտի միջոցին):

Պակաս նշանակութիւն չունի նաև ա-  
նասնաբուժական ոստիկանութիւն միջոցների գոր-  
ծադրութիւնը։ Եթէ մի տեղ տաւարի կամ ոչ-  
խարի մէջ սիրիբախտ է ընկնում, կառավար-  
չական անասնաբոյժը և տեղիս պաշտօնեաները  
միջոցներ են ձեռք առնում, որ հիւանդութիւ-  
նը չտարածուի։ Ժողովորդը պէտք է հաս-  
կանայ, որ այդ միջոցները իր օգուի համար են  
գործ դրւում և ուրեմն չպէտք է հակառակի,  
այլ անի ինչոր պահանջում են։ Ամենից գլխա-  
բորն այն է, որ ոչ ոք չծածկի երբ իր տաւա-  
րի մէջ երեւում է այդ հիւանդութիւնը, այլ  
անմիջապէս յայտնի ոստիկանութեանը (զիւ-  
ղերում - աւանուտէրերին, իսկ զիւղաքաղաքնե-  
րում - գաւառապետներին)։ Ամենը պէտք է հաս-  
կանան, որ այդ է պահանջում իրանց սեփա-  
կան օգուտը։ Թուսատանի հիւսիսային մա-  
սերում վերջին տեղեկութիւններից երեւում է,  
որ շնորհիւ ձեռք առած անասնաբուժական  
խիստ միջոցների, հիւանդ կենդանիներից 11  
անգամ առելի քիչ է կոտորւում սիրիբախտից,  
քան առաջ, երբ կառավարութիւնը պէտք է եր-  
խառնուում։

ЛЕНГРАДСКАЯ ГУДОЛИЧНАЯ БИБЛИОТЕКА  
7/31 1922  
Иванна Мясникян  
1331132113



«ԱՐՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ» II ՇՐՋԱՆ 190<sup>4/5</sup>

Կիսամսեանկարագրդ հանդէս 6 նոյնպէս նկարագրդ գըրքոյկներով և ուրիշ ձրի յաւելածներով:  
(Տարեն սկսում է Հոկտեմբերի 1-ից)

Տարեկան բաժանորդագինն է 2 ռ. 50 կ. Արտասահման 8 ֆր.

Հասցէն. Տիֆլիս, րедакցիա «Արօցճապակ Տերտ»  
Արտասահման. Tiflis. Rédaction «Arogdjapaik Tert»

Գ-ր Վ. Արծունու հրատարակութիւնները.

- 1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
- 2) Խոլերաի մասին (սպառ.), 3) Խոլերա (սպառ.)
- 4) Հիպնոտիսմ, հատ. I. (սպառուած) 25 կ.
- 5) Հիպնոտիսմ, հատ. II. 15 կ., 6) Դպրոցական առողջապահութիւն (պատկերագրդ) 50 կ.
- 7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.
- 8) Սիֆիլիս, Կակուզ շանկը, Սուսունակ 25 կ.
- 9) Թշուաների բարեկամ բժիշկ Հասպ 20 կ.
- 10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
- 11) Աղջկ (առողջ. և բարոյագիտակ. էտիւդ) 75 կ.

№ 1. ՄԻ ԽՄԻՐ, երկ. տ. (նկարներով) 5 կ.

№ 2. ՎԱՏ ՑԱՒ (նկ. սպառուած) . 6 կ.

№ 3. ՎԱՐԱԿԻՉ ՃԻՒԾՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ եկ ՆՐԱՆՑ ԹՈՅՑՆԸ (23 նկ.) 15 կ.

№ 4. ԹՈՔԱԿԱՍԿԱՄ ԲԱՐԱԿՈՅԱԼԻ (նկ.) 10 կ.

№ 5. ԴՈՂԵՐՈՅՑՔ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ (նկ.) 5 կ.

№ 6. ԻՆՖԼՈՒԵՆՑԱԿԱՄՆՈՐ ՑԱԼԻ (նկ.) 3 կ.

№ 7. ՄԻ ԾԽԻՐ . . . . . 5 կ.

№ 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՃԻՒԾՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ (նկ.) . . . 5 կ.

№ 9. ՎԱՏ ՑԱՒ ԿԱՄ ՄԻՖԻԼԻՍ, երկրորդ հրատարակ. Ա. մասն (9 նկ.). 20 կ.

№ 10. ՎԱՏ ՑԱՒ ԿԱՄ ՄԻՖԻԼԻՍ Բ մասն 15 կ.

№ 11. ԾԱՂԻԿ եկ ՊԱՏՈՒԱՍ . . . . . 15 կ.

№ 12. ՑՂԻ ԿՆՈՉ ԱՐՈՂՋԱՊԱՀՈՒԹ.

Հեղ. բժշկ. Գր. Տէր-Գրիգորեանի 10 կ.

№ 13. ԽՈԼԵՐԱՆԻ ՄԱՍԻՆ . . . . . 15 կ.

№ 14. ՄԻՔԻՐԱԽՏ, հեղ. Գ. Ղազարեանցի. 7 կ.

1.որ հեն տեսել «Բժշկի միջնորդիներ», № 1 Մի՛ խմիր,

№ 2 «Խույր ծննդկաններին», ծախ. 100-ը 1 ռ., Դիմել խմր.

Հեղինակի հասցէն. Ասֆլուս, Դ-ր Վ. Մ. Արցրունի.